

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կառավարական կարգադրութիւն. Գնելու ոյ-
ժը. Փաղիշաճ—գերիւ. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Գոլիցիստների խորհուրդը լուրջ կան-
գամ է ցուցնում խմբագրութեան. Ներքին լու-
րագր. Նամակ խմբագրութեան. Ամերիկո-սպա-
նական պատերազմի գլխավոր կետերը. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Գալին է:

ԿԱՌԱՎԱՐԱՅԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ Հայ գաղթականների մասին

Թագաւոր Կայսրը այս տարվայ մարտի
26-ին Բարձրագոյն Հաստատել է մինիս-
տրների կոմիտէի օրագրերը, որ հիմնված
է 1) Կողմնորդ քաղաքացիական մասի կա-
ռավարչական 1897 թվի գեղեցկագործի և
2) Բազուի, Գուլիստի, Թիֆլիսի և Երե-
ւանի նահանգների գրութեան մասին
1896 թվի հայտնիների վրա, և որով կար-
գադրված է.

1. Թոյլ տալ Կողմնորդ սահմաններից
Թիֆլիսի վերադառնալ, առանց պահպա-
նելու մարտային ձեւակառուութիւնները, այլ
միայն տեղական ոստիկանութեան գլխավոր-
ների վկայագրերով, թիւըքահայտատի այն
հայ գաղթականներին, որոնք ցանկութիւն
կը յայտնեն օգտվել այդ Թոյլտուութիւնից:

II. Տալ իրաւունք Կողմնորդ քաղաքա-
ցիական մասի կառավարչական. 1) Բարձրագոյն
Հաստատութեան օրից մի տար-
վայ ընթացքում հեռացնել իրան յանձն-
ված երկրի սահմաններից բոլոր թիւըքա-
հայտատի հայ գաղթականներին, որոնք
ցանկութիւն չեն յայտնի օգտվել մինիս-
տրների կոմիտէի ներկայ որոշման I կէ-
տով սահմանած թոյլտուութիւնից, տալով
կարօտեալներին, ըստ իր հայեցողութեան,
ձանապարհածախս, գաղթականների հա-
մար հաւաքած նուէրներից, և 2) յայտ-
նել այդ մասին անպաշտ ընդհանուրի դի-
տութեան համար:

ԳՆՆԵԼՈՒ ՌՅՈՒՆ

Թէ համայն Ռուսաստանի և թէ մեր
Անդրկովկասի ազգաբնակչութիւնը վերջին
տարիներս կորցրել է և կորցնում է զը-
ն և լուր ոյժը, այսինքն նա անկարող
է գնել այն միջոցները, որոնք հարկաւոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱԼԻՍԷ

ԲՈՎԱՐԱԿԱՆ ԳՐՈՅՑԻ Ի. ՎԱՊՈՎԻ *

Որպիսի թուրք, որպիսի թանձր մառախուղ
էր կանգնած այն աշանը վետրինի դիմաց:
Ամեն ինչ խոնաւ է ու ցեխոտ: Բարակ անձրեւ
մաղդղում է անդադար. երկինքը կարծես սառը
դուրլիներով ուղկանոտ լինի, որ ծանրացած է
գիւղի ցածրիկ խրճիթների վրա: Իսկ դուրսը
ձիւ, աղմուկ, իրարանցում:

Երկու գիւղական պանդոկների մէջտեղ գտնվող
փոքրիկ հրապարակը ծածկված է կառքերով,
կանգնած, զննորական դահլիճներով իր
սպիւնով, սպալապաններով և գիւղացիներով:
Նրանց մէջքերից հաղի. հաղ անցնում է նորա-
կող գիւղական խումբը: Նրանցից ոմանք հա-
գած ունեն վերադառնալ վերադառնալ, միւս-
ները՝ ոչխարի մորթուց կարած, կիսամուշտակ-
ներ՝ բրդոտ երեսները շուռ տուած գէպի դուրս,
մեծ մասը իրանց ձեռքով կարած, ջրբլիւն
«կամարուկներ»: Բոլորն էլ ոտքերին ունեն
համարեա մաշված ցեւ վուլնեւ (արեւ), մէջ-

են նրա կենցաղավարութեան համար: Գը-
նելու ոյժի պակասելը կամ իսպառ ոչնչա-
նալն է, որ սաստկացնում է երկրի ան-
բերրութեան ծանրութիւնը: Նրբ ազգա-
բնակչութիւնը ունի հարուստ տուն, զա-
նազան կահ կարասիներ, յետ զցած փող,
նա զբանջ գործ է ածում անբերրի տա-
րիներում: Գնելու իր համար հաց, իսկ իր
կենդանիների համար՝ խոտ և դարման: Իսկ
երբ նա ոչինչ չունի և պարտքերի մէջ
կրկնված է, այն ժամանակ նա կատարեալ-
պէս թշուառ է և անօգնական:

Անբերրի տարիներ Անդրկովկասում պա-
տահել են ամեն ժամանակ արանից տասը,
քսան, երեսուն տարի առաջ և աւելի հին
ժամանակները: Սակայն նրանք անցողական
հարկերն են դժբաղդութիւններ էին, ու-
րոնց ազդեցութիւնը ժողովուրդը թուլաց-
նում էր ծախելով իր տան գոյքի մի մասը
և հաց առնում: Սակայն մեր երկրի մի
քանի տեղերում, ինչպէս, օրինակ, Նոր-
Բայազետի գաւառում, ժողովուրդը արդէն
կորցրել է իր տան հարստութիւնը, սպա-
ռել է յետ զցած փողերը, ծախել է զա-
նազան լիանակալի իրեր և զարգարաններ
և այնպիսի պարտքերի մէջ է ընկել, որոն-
ցից դուրս գալու յոյսը արդէն նրա համար
զարձել է կապակցուել և անհասանելի:

Ամենին չը պէտք է կարծել, թէ ժո-
ղովրդի հարստութեան զլխավոր աղբւրը
հացն է: Մեր երկրում շատ կան գիւղեր,
որոնք պարագլուծ են այգեգործութեամբ,
բամբակի մշակութեամբ, ծխախոտագոր-
ծութեամբ, կամ զանազան արհեստներով,
որոնց բոլորիւնք ծախում են և հաց գը-
նում, և բոլորովին ազատ են մնում սովից և
քաղցածութիւնից, մինչդեռ միւս գիւղերը,
որոնց գլխավոր պարագլուծը հացահա-
տիկներ մշակելն է, մնում են կարօտ վի-
ճակի մէջ անբերրի տարիներում: Ուրեմն
այստեղ կարեւոր է, որ ժողովուրդը կամ
իր պատրաստի հացն ունենայ ապահով
աղբւրը համար, կամ բաւականաչափ ոյժ
ունենայ հաց գնելու ուրիշ տեղից իր կա-
րիքների համար:

Այդ հիման վրա և պէտք է ժողովրդի
օգնութեան գործը երկու ուղղութիւն ու-
նենայ. մի կողմից նա պէտք է աշխատի
մեծ ծախսել հողի արդիւնքը և արեւ-
ոս թիւնը՝ մոցնելով զանազան կատա-
րելագործութիւններ տեղական գիւղատն-

տեսութեան մէջ, իսկ միւս կողմից պէտք
է տալ ժողովրդի ձեռքը և զանազան ու-
րիշ պարագլուծութիւններ, օրինակ, ար-
հեստներ, որոնց արդիւնքը աւելացնէր
ազգաբնակչութեան եկամուտը և ուրեմն
նրա գնելու ոյժը: Միմեանց վրա կրկնվող
դժբաղդ տարիները թող վերջապէս դրդեն
գործնականապէս օգնութիւն հասցնելու
աղքատացող ազգաբնակչութեան:

ՓԱՌԻՇԱՀԼ—ԳԵՐԻ

I
Այս վերնագրով մի ընդարձակ յօդուած է տպել
«С. Петербургскія Вѣдомости» լրագրի աշխատակից
Վլադիմիր Գոլոմոյզով: Փրանսիական մի ամսագրում
տպած տեղեկութիւնները քաղաքացիներ անելով,
նա ցոյց է տալիս, որ Ազգիւ-Հավից այժմ գերի է
Գերմանիայի ձեռքում: Այս թէ ինչպէս:

Վաղուց Գերմանիայի անտեսագէտները հա-
կացել են, որ գերմանական խաղաղ նւաճում-
ների համար ամենապարմար տեղը Թիւրքիան է:
Գերմանական իւրաքանչիւր յայտնի անտես-
ագէտ, պրոֆեսոր Roscher ասում էր Բալիս-
տանի իրաւագիտութեան Գերմանիայի մասին. «Մը-
րանք այնպիսի երկրներ են, ուր, խաղաղ յաղ-
թութիւնների միջոցով, կարելի է ստեղծել երկ-
րորդ Գերմանիա և այդ Գերմանիան կը դերա-
զանցէ այժմեան Գերմանիան իր տարածու-
թեամբ, ազգաբնակչութեան թուով ու հարստու-
թեամբ և կը լինի ամենաակաբոր պատուարը
Ռուսաստանի և համադարձակապէս ղեկի:
1850 թվին մի ուրիշ գերմանացի գրում էր իր
մի աշխատութեան մէջ. «Վաղկականութեան
համարը Գերմանիայից ուղղվում է դէպի Արե-
ւմուտը, դէպի հիւսիսային և հարաւային Ամերի-
կա և Աւստրալիա: Համարեա ոչ ոք չէ մտածում
Արեւելքի մասին, որ նոյնքան մօտ է մեզ: Իսկ
ինձ թւում է, որ պէտք է մոցնել հասարակա-
կան կարծիքի մէջ Փոքր-Ասիայում գերմանական
գաղթականութիւնների հիմնելու միտքը: 1875
թվին ինձեքը Պրեսնէլ հրատարակեց մի բրո-
շիւր, որի մէջ ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է
կերպարանաւորել Անատոլիական գերմանական
ազգային աշխատանքի միջոցով. նա խորհուրդ
էր տալիս երկաթուղիների կառուցանել և դեր-
մանական գաղթականութիւններ հիմնել Անա-
տոլիայում: Եւստով Բերլինում կազմվեց «Առեւ-
տրական և արդիւնաբերական ընկերութիւնը»,
որ ունէր 50 միլիոն մարկ գրամագուլան և ձեռ-
նարկեց այդ գործին, Թիւրքիա ուղարկելով մաս-
նադէտներից կազմված մի արշաւախումբ՝ տե-
ղական պայմանները և հարստութիւնները ու-
սումնասիրելու համար: Այնուհետեւ անտեսա-

գէտների տեղեկանքները իրականացան: Գերմա-
նական կառավարութիւնն էլ ուշադրութիւն
դարձրեց Արեւելքի վրա, պէտք էր ուսումնասի-
րել երկրի ծայրէ ծայր, և ահա յայտնի աշ-
խարհագիր Կիպրոս գնաց Փոքր-Ասիա, ուր
սուլթանի աջակցութեամբ կարողացաւ դիտել
ամեն ինչ և մանրամասն բարոյեղ կազմել, չը
հանդիպելով ոչ մի արգելքի և դժուարութեան:

Այնուհետեւ Գերմանիան աշխատեց կուրացնել
սուլթանին իր բարեկամութեամբ և գերմանա-
ցիները ստացան երկաթուղային ամենակարեւոր
կոնցեսիաները: Գերմանական փողերով կառուց-
վեցան Օսմանեան պետութեան երկու ամենա-
գլխաւոր երկաթուղային գծերը. մէկը Եւրօպա-
կան Թիւրքիայում, Սալոնիկից մինչև Մոնաստիր
և այդտեղից երբ ուղեւան, կարող են միացնել
աւստրիական երկաթուղիների հետ, իսկ միւսը,
որ աւելի ևս կարեւոր նշանակութիւն ունի,
Փոքր-Ասիայում է և սկսվելով Բոսֆորի ափա-
կան ափից՝ դնում է դէպի Անգորա, իսկ այնու-
ղից պիտի շարունակվի դէպի Կեսարիա, Կիար-
բէլը, Բաղդադ և Պարսից ծոցը. ապագայում
դա կը լինի մի ահապին ձեռնարկութիւն, որ
կը կապէ Եւրօպան Հնդկաստանի հետ: Եսկի-Շէ-
հէր քաղաքից սկսվում է մի կողմնակի գիծ, որ
դնում է դէպի հարաւ, Կարանասիէի կողմը և
հասնում է Կոնստանդուպոլիսի: Կոնստանդու-
պոլիսի մինչև Միջերկրական ծովը: Վաղուց
գերմանացիները ցանկանում էին ձեռք բերել
այս գծերը կառուցանելու իրաւունքը, բայց կա-
մին ուրիշները, որոնք նրանցից առաջ էին ցան-
կութիւն յայտնել, ուստի հարցը վճռվեց գերմա-
նացիների օգտին միայն սուլթանի աջակցու-
թեամբ: 1879 թվին անգլո-թուրքական մի խումբ
ձեռնարկողներ և ապա անգլո-ֆրանսիական մի
ընկերութիւն ձեռնարկեցին Անգորայի գծի կա-
ռուցման: Փրանսիական ինժեներները գնացին
Անատոլիա, ձանապարհի ուղղութիւնը որոշելու
համար: Ամեն ինչ աշխատեցին իր խոստանում,
որովհետեւ մինիստրները և պալատը բարեհաճ էին
դէպի այդ ընկերութիւնը: Բայց 1888 թվակա-
նին սուլթանը մի ֆերմանով խեղ կոնցեսիայի
իրաւունքը անգլո-ֆրանսիական ընկերութիւնից
և տուեց գերմանական բանկի ներկայացուցչին,
գերմանական դիւլաւտարի փառաւոր յաղթու-
թիւն տարաւ: 1893 թվին նոյն գերմանական
ընկերութիւնը Եսկի-Շէ-հէրի, Կեսարիայի և Մի-
վասի գծերի արտոնութիւններն էլ ստացաւ.
Թէ անգլիական մի ընկերութիւն աւելի ձեռն-
տու պայմաններ էր առաջարկում, բայց սուլ-
թանը նախապատիւ համարեց գերմանացիներին:

Երազ տեսաւ: Ահապին մի ամպ, ամպի մէջ
գործեր և նրանց մէջն էլ Սոսեանը: Ո՛ր, Մայր
Աստուածածին, այս ինչ սարսափելի բան է.
ամպը սլանում է, երկինքը դրդում է, երկիրը
ցնցվում: Այնտեղ պատերազմ է: Սոսեանը ան-
հետացաւ ամպի մէջ. նա այլ ևս չէ երևում: Թէ
այդ նա է...

Սլանող պառաւը զարթեց:
Խրճիթը մոկէ և հանդարտ է: Միայն քամին
է ուռնում դուրսը: Այ թէ ինչ բան է եղել
պատերազմը: Տէր մեր, Յիսուս Քրիստոս, պահ-
պանի նրան: Սուրբ Աստուածածին, ողորմիր և
խնայիր Սոսեանին:

Մինչև լոյս՝ պառաւը չը կարողացաւ բնել:
—Պետրոս ամի, ինչ է նշանակում երազում
ամպ տեսնելը,—հարցրեց նա առաւօտեան:

—Ձանապահ տեսալ ամպեր են լինում, Յօնա.
ամպ կայ, որ անձրեւ է բերում, ամպ էլ կայ,
որ լաւ եղանակ է: Դու ինչ տեսալ ամպ տեսար
Յօնան պատմեց երազը: Պետրոս ամի՛ն. մոա-
ծութեան մէջ ընկաւ. այդ տեսալ ամպի մասին
երազահամում ոչինչ չէ ասված: Բայց տեսնելով
պառաւի վախեցած դէմքը, նա քաղցրութեամբ
ասաց.

—Մի վախենար, Յօնա, երազը բարին կը
կատարվի: Գո ամպը լրաբեր ամպ է. շուտով
Սոսեանից նամակ կը ստանաս:

Պառաւի գէղեղ լուսաւորվեց: Եւ իրաւ, վեց
օրից յետոյ՝ մի կամաւոր՝ Սոսեանի ընկերնե-
րից, որ սերը գերմանի ուղեկցիներէն էր

* Հեղինակը այժմ Բովաբայում լուսաւորւթեան
միջնակարգ է:

Անա այդ երկաթուղային գծերի երկարութեամբ, հազարաւոր կիլոմետր տարածութեան վրա, Գերմանիան պատրաստուած է, ինչպէս առաջ մի գերմանական գրող, «մեծ և զուտ գերմանական» գաղթականութիւն: Բազմաթիւ գերմանացիներ, որոնք այցելել են այդ տեղերը, իրանց հետ Գերմանիա են տանում մեծամեծ ծըր-բազրիները ապագայի համար: Գերմանացի Ֆոն-Դեր-Վոյց երկաթուղային գծի վրա երթնելով ինչ սկսելու ժամանակ մտածում էր «այն անթիւ գերմանացի գիւղացիների մասին, որոնք գիտեմ են Ուլիանովի միւս կողմը անպայման բաներ որոնելու: Մինչդեռ այստեղ, մեծ առևտրական ճանապարհների մօտ, այդ գիւղացիները կը զբոսնէին գործունէութեան լայնարձակ և հարուստ ապագայէ, եթէ գային բաւականաչափ մեծ թիւ և կարողանային մի ամբողջութիւն կազմակերպել: Գերմանացի յետոյ Փոքր-Ասիա գնաց աշխարհագիր Naumann՝ Ոսկեղջիւրից մինչև Նիքարտի ակունքները ուսումնասիրելու համար: Խօսելով գերմանացի գաղթականների մասին, նա ասաց. «Ամերիկայում մեր գաղթականները կորցնում են իրանց կապը Գերմանիայի հետ, մինչդեռ Արևելքում նրանք կապ կը պահեն իրանց հայրենիքի հետ և մշտական յարաբերութիւններ կը պահպանեն: Փոքր-Ասիան ամենամանրամասն կերպով ուսումնասիրված է, այնպէս որ Գերմանիայում բազմակողմանի ծրագրերն են կազմված թէ ինչպէս պէտք է մեծամեծ գաղթականութիւններ հաստատել Փոքր-Քիւսով: Ի հարկէ յոյս կայ, որ սովորաբար, վա- խնայով, միւս պետութիւններից և իր հպատակ հայերից, գերմանացիներին ազատարարներ կը համարէ: Այս յոյսն է գաղթականական բոլոր ձեռնարկութիւնների հիմքը: Սովորաբար անը շահագործվում է այս գլխից և ուղղահաստների հրամանատարից գերմանացիները սպասում են, որ գերմանացի գաղթականները ազատ կը լինեն հայրենիքից, իսկ նրանց կայքը ապահովված կը լինի: 1895 թ.ին Ֆրանկֆուրտում գումար- ված կոնֆերանսի առաջ պ. Hermann բա- ցատրում էր թէ ինչպէս պէտք է գերմանացի- ներին գաղթեցնել Փոքր-Ասիա և որովհետեւ մեծ խմբով գաղթեցնելը քաղաքականութեան դէմ կը լինի, նա խորհուրդ էր տալիս որ 6—8 մարդկանցից կազմած խմբերով գնան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՕՎԻՆԻՍՏՆԵՐԻ ԻՌՂՃՆ ՈՒ ԼՕԳԻԿԱՆ

«I think him so, because I think himso»
Shakespeare.

«Առաջին ապագայի համար օգտակար է արդեօք տարածել այնպիսի տեղեկութիւններ, որոնք կարող են փարատել մի ազգի թիւը կար- ձիւնները ուրիշ ազգերի մասին: Ինչ թուում է, թէ օգտակար է»,—ասում է յայտնի լեւուհի գը- րող Էլիզա Օծեկովան «Русская Мысль» ամսա- գրի խմբագրութեան ուղղած նամակում (№ 3): Բայց կան մարդիկ, որոնք հակառակն են կար- ծում, և այդպիսիների թիւն է պատկանում դժբաղդաբար վրաց գրականութեան այնպիսի աչքի ընկնողները, ինչպէս է իշխան Ա- կակի Մէրէթէլին, որ աւելի լաւ գործի արժանի

պատւին մի նամակ յանձնեց: Նամակը Սոսեանից էր: Պատուը շտապեց քահանայի մօտ և քահանան կարողաց հետեւալը:

«Այս նամակը լեզու գրում եմ, մայրիկ, որ ի- ճանախ թէ ես ողջ և առողջ եմ, և թէ մենք լաւ շարժեցնել սերբերին: Կեցցէ Բոլշա- քիան: Ես էլ ողջ-առողջ եմ, Բանդէ Սոսեանը էլ, հօրեղբորս Դիմիտրին էլ ողջ առողջ է և շատ զարեւ և անուր իմ մօրը: Սերբերը հրա- ցան գրել գիտում թէ խառն-խառն և թէ ջուկ- ջուկ, բայց մեր «ուրա»-ից սոսկում են: Յիշատա- շուկներից ուղիւ իմ մոռացած նոր փոխը, թէ զէ տղէքը կը փչացնեն: Ապրը անցնելու ենք «Դրագոմանի կիրճը, իսկ երբ մեզ արձակեն ատուն՝ Կիւպին ընծայել կը բերեն Նիշից, իսկ Եանա ուղարկում եմ մի լէ վ. ծախար իմ կենա- ցը: Իսկ Բադուկովին կը սովորեցնեմ թէ ինչպէս լինի սուղում թնգանութիւն ուսմբերը: Կրկին անգամ խոստում եմ քեզ: Գո հազարից որդի:

Սոսեան Գորբով

«Ողջն նաև Պետրոս ամուսն: Ուզում էի նը- րան մի սերբիական հրացան ուղարկել, բայց չինչպէս—չը գիտեմ: Հեռու են խիում, բայց ոչ չխտախ: Շատ բարեւ արա, մայրիկ, իմ կողմից և Սոսեանից:»

Պառա Յօնան երկնայի պէս ուրախացաւ և նամակը ձեռին վազեց Սոսեանիցների տունը: Նրանց էլ մասնակից անելու իր որակութեա- նը: Բայց աւելի երջանիկ էր զգում իրան Բա- դուկովին, երազելով ուսմբերի մասին, որոնցով

եռանդով, տարածում է վրացիների մէջ սխալ կարծիքներ հայերի մասին և վերջովում է, երբ պ. Մարքի նման անաչառ և ձեռնհաս անձնա- ւորութիւններ աշխատում են «փարատել այդ կարծիքները»: Սակայն այս տողերը գրելու նը- պատակը պ. Մարքին պաշտպանելը չէ,—յար- գելի գիտնականը, որ Մէրէթէլին հետ վարած բանակում ցոյց տուեց փայլուն հրապարակա- խօսական ընդունակութիւն, պաշտպանութեան ընթերցողները ուշադրութիւնը Ակ. Մէրէթէլին պատասխանի («Кавказ» № 61) մի կէտի վրա, որ պ. Մարքը անուշադիր է թողել, թէ, մեր կարծիքով, այդ կէտը ամենից լաւ է ընտրուում Մէրէթէլին և նրա նման մի քանի վրացի հրա- պարակախօսների վերաբերմամբ դէպի ճշմար- տութիւնը, երբ հարցը հայերի մասին է:

Իր պատասխանի մէջ վրացի հրապարակա- խօսը գրում է, ի միջի այլոց, հետեւեալը. «Մի- թէ նրանց (հայերի) զբոսմամբ չէր, որ Գրէնը հրապարակով յայտնեց, թէ Պամարա թագու- չին դա՛ քարձրացաւ հայերի և օսերի դաւերի չորսիւ, իսկ վրացիք այն ժամանակ, այսինքն 12-րդ դարում ներկայացնում էին մի փոքրիկ, անբան և նշանակութիւնից դուրի ամբոխ—ա- տում էինք մենք մեր յօդուածում «Կրեուլի»- մէջ: Պ. Մարքը զարմանում է, թէ ինչու պէտք է մենք այդպէս կարծենք: Բայց քանի որ հայե- րը խաբելով հաւատացրել են պ. Կուտուլին և պրօֆ. Նովոսիլին, թէ Պիֆիլսը միշտ եղել է և այժմ էլ շարունակում է լինել Հայաստանի մայրաքաղաքը, մենք կարող էինք հիմք ունենալ ենթադրելու և այլ... Կարծում ենք, թէ չենք սխալվել:» («Кавказ» № 61).

Կատիկական դատողութիւն, որի նմանը կա- ռելի է գտնել միայն կլասիկ մատենագիրների գրուածքներում, օրինակ Շեքսպիրի «Երկու վե- րմանացի պարոններ» կոմիդիայում, որի մէջ ա- ղային Լիւչիանոս, օրիորդ Իւլիան հարցնա- թէ ինչու է նա Պրօտէլին համարում իր փեսա- ցունիկից ամենալաւը, պատասխանում է. «Ես այդպէս եմ կարծում նրա մասին, որովհետեւ ես այդպէս եմ կարծում: Բայց հարցը միայն լօղի- կայում չէ, որ չկազմ տեղից պահանջել չէ կա- րելու, հայրը զլխաւորապէս բարեխղճութեան մէջ է, որ ամենից կարելի է պահանջել հաւա- սար չափով, ևս առաւել այնպիսի մարդուց, որ հասարակութեան ղեկավար է հանդիսա- նում: Կարելի է արդեօք երեւակայել աւելի մեծ անբարեխղճութիւն քան այն, որ թոյլ է տուել իրան Ակ. Մէրէթէլին, դրակաւն կը բ- պով ուղղելով հայերի հասցին մի մեղադրանք, որ միայն ենթադրութիւն է եղել, այն էլ միանգամայն կամայական ենթադրութիւն,—մի մեղադրանք, որի նպատակն է աւելի ևս բուր- լեւ հայտատեցութիւնը վրացիների մէջ: Այդ բաւա- լան չէ. երբ պ. Մարքը հարցնում է իշխ. Մերե- թէլին, թէ հրօտեղից է իմացել նա իմ բանը («Нов. Об.» № 4842), իշխանը փոխանակ խոս- տովանելու իր միջոցը կամ գտնէ լեւելու, աղաւա- դում է Մարքի խօսքերը իմանալ բառի տեղ գիտելով կարծել բառը, որպէս զի միամիտ ըն- թերցողներին թել, թէ խօսքը սխալեց մինչև վերջը եղել է ենթադրութեան, և ոչ թէ

մեծ եղբայրը նրան տուել կը սովորեցնէ:

Մի օր Յօնան դուրս եկաւ փողոց և տեսաւ գերմանացի մի նոր խումբ, որոնց ուղեկցում էր բոլորապէս մի գինուր: Սկզբում նրան թուաց թէ՛ այդ իր Սոսեանն է, այնքան նման էր նը- րան: Բայց ոչ, դա մի ուրիշ մարդ էր: «Բայց էլի կը հարցնեմ»—մտածեց պառաւը—«Սոսեա- նի մասին. գուցէ սա նրան ձանաչում է»: Բայց յանկարծ պառաւի ուշադրութիւնը դարձաւ գե- րմանցի վրա, նա առաջին անգամն էր տեսնում սերբերին:

—Աստուած ջան,—փնթփնթաց նա ինքն ի- րան—այ թէ ինչ տեսակ մարդիկ են եղել սեր- բերը: Կարգին մարդիկ: Խնդճ մայրեր, գիտեն արդեօք թէ ինչ է հանդիպել իրանց որդիքը: Ե՛յ, տղերք, սպասեցէք...

Եւ նա շտապով մտաւ խրճիթը ու այնտեղից վերադարձաւ օդին չիլը ձեռին: Գերմաներն ու- ղեկցող գինուրը բարեբարութեամբ ժպտաց և թոյլ տուեց նրանց կանգ առնել:

—Ցախիմ, ֆալիմ—չորհակալ էին լինում յոգնած գերմաներ, որ կաղտուրվեցին մի կում կենտալից խմիչքով:

—Ինչ էլ թող մի քիչ, մեծ մայր,—ծիծաղե- լով ասեց ուղեկից գինուրը, ձեռքը մեկնելով դէպի գրեթէ դատարկված շիշը:

—Տէր Աստուած, մեզ պէս քրիստոնեաներ են... Եւ ինչ բանի համար պէտք է, որ մենք դրանց հետ կուենք—զարմանում էր պառաւը աչքերը գցած հեռացող գերմաների վրա:

գրակաւն մեղադրանքի մասին և հարցի ձեւը այդպէս փոխելուց յետոյ պատասխանում է պ. Մարքին այնպիսի խօսքերով, որոնք ցոյց են տալիս կատարեալ արհամարհանք դէպի առողջ դատողութիւնը և խելճը:

Մենք չենք զարմանում, որ հայերի վրա սուտ մեղադրանք են բարդում,—այդպէս չեն վարվում այժմ միայն մոնշիւրն ու անդամաւորները. բայց մենք բոլորովին ապշած ենք մնում, երբ տես- նում ենք, որ ամօթը այն աստիճան կորել է, որ մարդիկ կարելի չեն զգում թզնու տերներով ծածկել իրանց բարոյական մեքուրթիւնը: Դրա- կանական բարձրելի անկումը աւելի հեռու գնալ չէ կարող. նա հասել է արդէն Հերկուլեսեան սիւներին:

Տ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Ապրիլի 15-ին

Երկու շաբաթ է, որ այստեղ է գտնվում վրաց դրամատիկական խումբը և մինչև այժմ տուել է չորս ներկայացում: Կարելի է չորհուրդել մեր վրացի եղբայրների այդ առաջին փորձը: Խումբը վատ չէ կազմակերպված. տ.տ. Աւարով և Ջաֆարաճէ խաղում են բաւական հարթ: Վատ չեն խաղում դերասաններ Գուլի, Աղամբ- ձէ, Ջաֆարաճէ, իսկ խմբի պատկը կազմում է տաղանդաւոր դերասան Ալեքսեյ-Մէսիսի- Յաւալի է, որ այդ դերասանի ձայնը բոլորովին կտրվել է: Մեր վրացի եղբայրները կարող են պարծենալ նրանով: Մինչև այժմ խաղացել են «Ներքալ» և «Երոյ», «Կինոս», «Ուրիշ Աֆոստա» և Սարգիսի Երկրամօլի փոխադրած «Հայրենիք» պիէսները: Վերջին երկու ներկայացումներին բե- մը և դերասանների հազուադէպ շատ չքեղ էին: Առաջինից կիրակի խումբը պիտի խաղայ Շի- լէրի «Աւագանիքը»: Այսպիսով են նոր այժմ թիֆլիսից: Ցանկանում ենք խմբի գործին աջու- ղութիւն: Մեզ զարմացնում է մի բան: Թատրո- նը ամեն անգամ համարեա դատարկ է լինում և երկի նախաձեռնող պարոնը, բացի բարոյական քաջալերութիւնից, ուրիշ ոչինչ օգուտ չի ունե- նաւում: Որքան մեզ յայտնի է, այստեղ քիչ չեն վրացիները. իւրաքանչիւր անգամ մենք նկա- տում ենք մի քանի մեղ ծանօթ ժողովրդային ընտանիքների բացակայութիւնը: Ինչ ասեմք բարձրագոյն ուսում առած այդ դարձներին, որոնք մոռանում են, որ խեղճ դերասանները, զրկանք կրելով, եկել են մի օտար քաղաք ի- րանց մայրենի լեզուով ներկայացումներ տալու և ներկայացումներ տրվում են մերի պատերի և դատարկ ակունքների համար: Ո՛ր օրվայ հա- մար են, պարոններ, ձեռ փայլուն կոճակները կամ գուցէ կասէք թէ ձեռ գեղարուեստական ճաշակը բարձր է Մեխիսիլիների տաղանդից: Ու- ռախալի է, որ գտնէ հայերից շատերը անտար- բեր չէին և ամեն անգամ յաճախում են... Այո, այլ է գաւառը. այլ է թիֆլիսը: Թող պ.պ. Մէ- րէթէլին, Էրիստով և ընկ. սերմանեն երկու հա- րազատ դրացի աղջիկի մէջ առեղծութեան սեր- մեր, սակայն նրանք երբեք յարաւոն լինել չեն կարող, որովհետեւ կենանք մեզ ուրիշ դատեր է տալիս:

Ա. Սրբենցի

Պատերազմը վերջացաւ: Զինադադար հաս- տատեց:

Միտքեան տօնը մօտենում էր և գինուրներին արձակուրդ տուեցին տուն գնալու: Վերջինից էլ սկսել էին վերադառնալ: Բայց Սոսեանը չը կար նրանց մէջ—ոչ ինքը, ոչ էլ նրանից մի տե- ղիկութիւն: Էլի մտածութեան մէջ ընկաւ Յօ- նան, տխրութեան թախիծը նրան պատեց. ծա- նըր մտքերը պաշարել էին նրա արևոյ դուրս... Օրերը անցնում էին իրար հետեւից. պառաւը անդադար նայում է բակի դռնակին, թէ երբ պիտի բացվի: Նկատ հաս Քէնդիլ Սոսեանով, ե- կա Պետրոս Դիմիտրի, եկան Ստամատով եղ- րայրները: Յօնան նրանցից ամեն մէկին դիմա- ւորում, հարց ու փորձ է անում,—ոչ ոք ոչինչ չը գիտէ: Նրանք, ճիշդ է, պատահել են Սոսեա- նին, բայց պատերազմը վերջանալու աչքից թու- ղել են նրան. այդպէս են պատասխանում բոլո- րը: ձմրվում է մայրական սիրտը, թշուառ կինը խնայաբար նման թափառում է իր տան բա- կում և անվերջ Սոսեանի մասին է մտածում:

—Մայրիկ, հօրեղբորս Դիմիտրին եկել է— չնչսպասաւ ներս վազելով ասեց նրա Կինա աղ- ջիկը:

Պառաւ վեր է կենում և շտապում է տեսնել Դիմիտրին:

—Բարեւ դարուստ, Դիմիտրի. իսկ ձեռ մնաց Սոսեանը:

Բայց Դիմիտրին էլ ոչինչ չը գիտէ:

—Կարելի է նրան Վիլին են ուղարկել—աւե- ւացնում է նա, որպէս զի հանգստացնէ պառա-

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 23-ին

Կարծում եմ՝ սխալված չեմ, եթեպէս ինքն ինքն ինքն ինքն էլ, ինչ նման, մի փոքր դարձա- ցան՝ տեսնելով որ իմ նամակին պատասխանեց ոչ թէ պ. Ս. Լիսիցեան, որ թարգմանել է «Quo Vadis», կամ Հրատարակական ընկերութիւնը, որ տպագրել է այդ թարգմանութիւնը, այլ պ. Ս. Մալխասեանց, որ այժմ նոյն իսկ մասնա- ժողովի անդամ չէ: Նախկին—հախազահութիւնը, իմ կարծիքով, չէ արդարացում մեր երկուս- տարը հայադէտի շտապ միջամտութիւնը պա- հարցում, քանի որ Հրատարակական ընկերու- թիւնը, իր թարգմանական մասնաժողովով դերձ, փոքր Աստուծոյ, դեռ գոյութիւն ունի և կարող է պատասխանել ու բացատրութիւն տալ: Եթէ կայ մի հանգամանք, որ գուցէ բա- նալի կարող է լինել պ. Մալխասեանցի հետ, դէս դարձն, այդ պէս է, որ նա էլ, ինչպէս և ինքն է իր նամակից, մասնաժողովի ուրիշ և դասների նման, յանձն է առել թարգմանու- թիւններ անել ընկերութեան համար, և ուրեմն ներկայ դէպքում նոյնպէս «մեղադրողներ» չուն տարանք» վրա է նստած...

«Ես կամենում եմ,—ասում է պ. Մալխա- սեանց,—այս նամակով հարցը միայն չէ դրացի- ներ, բաժանել անձնաւորութիւնից, որպէս զի հրապարակի վրա մնաց լիկ իրաւաբանական կամ մասնաւոր էթիկական հարցը: Սակայն, ա- սացեք ինչոքեմ, միթէ ես կամեցել եմ հարցը կապել որ և է անձնաւորութեան հետ, և միթէ իմ նպատակը «իրաւաբանական կամ էթիկա- կան» չէ: Ինչ հարկաւոր էր մի թ ա ր մ առ ի թ, բողոք յայտնելու համար, այդ առիթը, հանա- դամանքների բերմամբ, Մեխիլիսի վէպը եղաւ և պ. Մալխասեանցին աւելի քան ում է իցէ լաւ յայտնի է, որ սրանից մի քանի ամիս առաջ այդ բողոքն ես սուրմ էի բարձրացնել «Բուդ- յա» գրքի առիթով, և եթէ այդ անկարող եղաւ անել, լոկ այն պատճառով, որ գրքի երեսին չը կար կազմողի ամբողջ անուն և ազգանունը: Եթէ այժմ «Quo Vadis»-ի փոխարէն դուրս գար մի այլ գիրք, օրինակ «Homo Sum», թարգմա- նութիւն մի այլ անձի, նոյն իսկ «Մալխա»-ի խառնակ, ես աւելի վառա՛ն կը գրէի, որով- հետեւ այդ դէպքում ամենակաւածար մարդն իսկ իմ բողոքի մէջ չը կարող տեսնել կոր- նապահութեան նշույն անգամ...

Սակայն աւելի լաւ է ուղղակի հարցնի գիտել: Եւ, իմ կարծիքով, պ. Մալխասեանցի աւելի խե- րացի վարված կը լինէր, եթէ իրեն դրական ապագայի մարդ, ուղղակի ընտել հարցը «իրա- ւաբանական կամ էթիկական» տեսակէտից, փո- խանակ աշխատելու մէկի մեղքը միւսին վա- ցցել: «Quo Vadis»-ի թարգմանիչը պատասխա- նատու չէ, ասում է նա, որովհետեւ մասնաժո- ղովն է յանձնել նրան. մասնաժողովն էլ մեղա- րու չէ, որովհետեւ ուրիշ մասնաժողովն էլ նոյնն են արել: Ուրեմն մեղադրել տրա ին- ցի իսկ է... Սովորութեան և տրադիցիայի օ- րէնքը, գուցէ, պարտաւորել կարելի է համա- րել կայր ամբօրի համար, բայց ոչ թէ մի գրական հիմնարկութեան ղեկավարների հա- մար, որոնց պատիւն չի բերի ասել թէ՛ «մա- խորհները արեւ են, մենք էլ արեւեցնեմք»: Ես ա- մարում եմ այդ տեսակէտը ընդառաւարկութեան ղեկմանց, և կրկնապատկում եմ իմ առաջին նա- մակում յայտնած բողոքը, որովհետեւ դուրս է գալիս, որ «Quo Vadis»-ի դէպքը բացառութիւն չէ, այլ բազմաթիւ փաստերից մէկը: Աւելի վատ:

Խ. Մալխասեան

Բնութեան վերջին ձանադարձով է վե- րադառնում,—այսպիսով խօսում է նա քի թի տակ:

—Տէր իմ Աստուած,—ախ քաջելով ասում է մայրը,—նը մնաց որդիս: Եւ նա գիտում է Սո- եանիցների տունը՝ յուսալով, որ այնտեղ մի լուր կ'իմանայ: Նրանց աղջիկը, Սոսեանի կանի նրան, թէ նամակ են ստացել և թէ Սոսե- անը վերադառնում է: Միմիտրին տանը կը լինի: Բայց չէ, Սոսեանիկան լոււ է: Նա էլ ոչինչ չը գիտէ: և նրա աչքերը թաց են արտասուքից:

Ամբողջ գիւղը ոտքի վրա է: Դիմաւորում էին պատերազմից վերադարձող առաւել զօրաւորն- րը: Փողոցի մէջեղից, Յօնայի խրճիթի ուղիղ դիմաց երկու սին էին տնկել: Միմիտրի ծայրե- րը միացրած էր կամարած և տախտակով: Լեռ- ներից բերած անուշահոտ իւղնիկի ճգնելով զար- դարել էին սիններն ու կամարը, իսկ ամենի վերի ամբարից էին Պաղարջիկից բերած ձի- գրութիւնն այս խօսքերով: «Ողջ ոչինչ քաջ գի- ւորներ են: Մայր բոլորը զորադարձ էին աղ- զային եռադրոյն գրօջակներով: և այդպիսի կազմվել էր յաղթական կամար: Նկատ ու քա- ջաւ յաղթական զօրքը, բայց Սոսեանը չը կար- նրա շարքերում:

—Գուցէ նա մի ուրիշ կողմով է գալիս. գու- ցէ նա ուղարկ է ճնցը ճորաղալոյցի երեկոյան հասնել. ինչու պիտի տօնը օտարների մէջ անց- կացնէ: Ա՛յ, գալիս են գինուրները. մէկ-մէկ երկու-երկու: Նա էլ այդպէս իրիկնաղէմին կը

հաստատությունները համար: Համաձայն բարձրագույն հրամանի, ամեն մի վարչական միջնակց է ընդունվել քրեատեսաներ: Արդեն վերջին օրերս երկու հայ երիտասարդ թավադներն ընդունվել են մարտերի պաշտօնակցության մեջ, մինը Սոյի և մյուսը մի այլ կենտրոնի համար: Պարսից կառավարության այս նոր քայլը շատ ուրախությամբ երևում է այն պատճառով, որ երկրի արդիւնքը կը մանկ կառավարության գանձարանը, փոխանակ այս և այն կեղեքիչի գրպանը հաստացնելու: Վերջապես երկրի զեկավարը ինքը կառավարությունը կը լինի, և կը գործածե՞ առանց կրօնի խարտիվան, այն անձինքներին, որոնք իրանց արժանաւորութեամբ օգուտ կարող են տալ պետութեան և երկրին: Պարսկաստանը լուսաւոր բարեկարգութիւններ է սպասում էմինը-Իովայի կարելնէտից:

Պարսկաստան մտած ապրանքների ընդհանուր մաքսի օրէնքները հաւասար իրաւունք ստացան: Իւրաքանչիւր վաճառականի ապրանքներից 50% մաքս է առնվելու, առանց բացառութեան: Այս հանգամանքը արդեն սկսել է պարսիկ վաճառականների մէջ առաջ բերել սովորական տրտմանքները: Միայն կառավարութեան զօրաւոր կամքը, անտարակոյս, կը դադարեցնէ այդ դժգոհութիւնները: Ժողովրդից ստացած մալիւթը — սուրբը գանձում էր մինչև հիմա Ամիր-Նիզամը: Բարձրագույն հրահանգ ստացված է, որ նա ոչ մի բանի չը միջամտէ:

Այսօր Թավրիզում ամենամեծ է՝ Թավրիզի շատ սիրելի, օրերը կը օգնի Պետրովա հիւպատոսարանի բարտուղար պ. Արամովի հետ:

W.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լոնդոնից հեռագրում են, որ ամերիկացիները, վստահ լինելով որ յարկութիւնը իրանք կը տանին, պատրաստակամութիւն են ցայտնում ընծայել Անգլիային Ֆրիթայիւնեան կղզիները:

— Կամաուրների զօրքի հրամանատարութեան համար նախագահ Մակ-Կինլէյ նշանակել է քառասուն զինեալ և տասն զինեալ-մայոր, որոնց թւում են Բուֆֆալո, Բլիլի, գնդապետ Դրանտ, նախկին նախագահի որդին, զինեալ Լի, որոնք վերջին բաղադրական պատերազմի ժամանակ հռչակվել են իրանց ընդունված:

— «Temps» թերթին հեռագրում են Կ. Պոլսից, որ եմինում և Հեկազում ազգաբնակչության մէջ ապստամբութիւն և խռովութիւն է ծագել սովի պատճառով: Ամբողջ տասն և երեք ամիս այդտեղ մի կաթիլ անձրև չէ եկել և սատիկի երաշտութեան պատճառով սով է առաջացել: Թուրքաց կառավարութիւնը կարգադրեց անովի-ջապէս զօրք ուղարկել Եմին և Հեկազ: Սուլթանի և Բ. Կրան մէջ անհամաձայնութիւն է ծագել զանազանի կրթականական վիճակի պատճառով: Հեկազ զօրք ուղարկելու համար փող է հարկաւոր: Թեսալիայում զօրքը պահելու համար փող է հարկաւոր. առաջիկայ բայրամի համար փող է հարկաւոր: Սուլթանը մտադիր է յունական պատերազմական տուգանքով զէնք գնել և վերակազմել օսմանեան նաւատորմը, իսկ Բ. Կրանը, ընդհակառակը, գտնում է, որ այդ տուգանքով պէտք է ծածկել պատերազմի պատճառած դեֆիցիտը:

— Մեծ պետութիւնները, բայի Գերմանիայից և Աւստրիայից, որոնք դադարել են հետաքրքրվել կրեական հարցով, գրադված են ներկայումս նրանով, թէ ինչ միջոցներ գործադրեն թուրքաց զօրքը չուտով Կրեոնից դուրս հանելու և նրա տեղ ընդունված զօրք մտցնելու համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 22 ապրիլի: Մինիստրութիւնը տեղեկութիւն է ստացել, որ Մինիստրութիւնը համապատասխան անգլիական կառավարութեան ստացած հեռագիրը հաստատում է Մանիլայի մօտ երէկ տեղի ունեցած ծովային պատերազմի լուրը և հաղորդում է հետեւեալը. երկու ժամ տևող կռիւլ յետոյ, որի հետեւանքն էր սպանիական նաւատորմի ոչնչանալը, ամերիկական նաւերը յետ քաշվեցին դէպի փոխադրող նաւը, որ խորխու ունէր զգած ծովացիների մէջտեղ, և անյոթնից բարձրութիւն պաշար վերցրելով: Ամերիկական պատերազմական մի նաւ, որի անունը չէ յիշված, կռիւ համար անպէտք դարձաւ: Ամերիկական ծովային խնդրեց անգլիական հիւպատոսից՝ հաղորդել սպանիական նահանգապետին իր առաջարկութիւնը, որով պահանջում է իրան յանձնել ինչպէս թիւերը, որոնք պահանջում են հեռագրական կապարանները, մի և նոյն ժամանակ յայտնեց, որ եթէ այդ պահանջը չը կատարվի, ծովային կը ռմբակոծի քաղաքը: Նահանգա-

պետը մերթեջ ծովային պահանջը: Մանիլայի ռմբակոծութիւնը պէտք է սկսվէր երկու-չորս ժամ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 22 ապրիլի: Նախագահը հրամանագրեց պատերազմական դրութեան մէջ գնել և կենտրոնացնել կանոնաւոր զօրքերը և կամաւորներին արևմտեան նահանգներից Սան-Ֆրանցիսկոյում: Երբեք չի նշանակ գործը զրկել ինչպէս զբաղող զօրք Ֆրիթայիւնեան կղզիներում: Ամերիկան կը գրաւի այդ կղզիները մինչև պատերազմի վերջը, և ապա այդ կղզիներով պէտք է լրացվի պատերազմական վարձատրութեան մի մասը:

Հաղորդում են, որ Մակ-Կինլէյ պաշտօնական ծանուցումն ստացաւ Մանիլայի անձնատուր լինելու մասին:

ՄԱՆԻԼԱ, 22 ապրիլի: «Liberal» հաստատում է, որ մինիստրական ճգնաժամ յիշատակելի է և կը յայտնվի մի քանի ժամից յետոյ: Կառավարութիւնը, կընդունի զինադրական կուսակցութեան առաջարկած հարցերի ընդունվելու կորուստներում: Մանիլայի մօտ եղած կռիւ մասին:

Մանիլայում պաշարման դրութիւն յայտնելու պատճառով, կառավարութիւնը արգելեց պատերազմական լուրերի տարածումը:

ՄԱՆԻԼԱ, 22 ապրիլի: Պատգամաւորների ժողով: Սաւէրոն, իր հարցադրումն անելով, ընդհադուում է նախկին ընթերցող, որոնց վրա է ընկնում այժմեան դրութեան պատասխանատվութիւնը, մի և նոյն ժամանակ պահանջում է Մանիլայի մօտ տեղի ունեցած կռիւ անաղող հետեւեալ պատճառների բացատրութիւնը: Հետեւեալը ցուցում է, որ պատգամաւորները պահանջողականների հակահայեցողականութեան թուլութեան համախոհներ դարձան. ցուցում է, որ ծախսվում են միլիոններ ներկայացուցչութեան վրա՝ փոխանակ զրահակներ գնելու: «Նա, ով սրով կ'օչնայ, մի այդպիսի ընթերցող, մեծ հայրենասէր կը լինի»: Մի պատգամաւորների ընդդրում են: Սաւատտա պատասխանում է, որ ինքն միշտ խաղաղութեան կողմնակից էր, բայց, չը նայելով կառավարութեան ճիշդին՝ պատերազմը անխուսափելի դարձաւ, որովհետև Սպանիային ստիպեցին:

ՄԱՆԻԼԱ, 23 ապրիլի: Մինիստրների խորհրդի մէջ կարգադրեց Ֆրիթայիւնեան կղզիների նահանգապետի հեռագիրը, այն մասին, որ անգլիական հիւպատոսը ցանկութիւն յայտնեց Արշիպելագոյի շինարարութիւն իր հովանաւորութեան ներքոյ աւելն: Պատասխանելու եղաւ՝ մերժում:

ՄԱՆԻԼԱ, 23 ապրիլի: Կարիստ Լօրէնս կարգադրեց Մանիլայից ստացված նամակը, որը հաստատում է թէ պաշտպանութեան համար ջրային ոչ մի միջոց չը կար: Զինուորական մինիստրը յայտնում է, որ Մանիլայում բաւական ցամաքային զօրք կայ՝ յարձակման դիմադրելու համար: Ծովային մինիստրը պատասխանում է, որ անհնարին էր սկզբից պատրաստել ջրային պաշտպանողական միջոցներ:

ՆԻԻ-ԵՐՈՒ, 23 ապրիլի: Մակ-Կինլէյ յայտնեց, որ եթէ Սպանիան չի վճարի պատերազմական ծախսերը, այն ժամանակ Ֆրիթայիւնեան կղզիները կը զիջվեն եւրոպական պետութիւններից: Եւ է մէկին. այդ դէպքում Անգլիային առաւելութիւն կը տրվի:

ԿԻՎԵՍՏ, 23 ապրիլի: Զինուորական խորհուրդը վճեց, որ անհրաժեշտ է ոչնչացնել սպանիական նաւատորմը, նախ քան Հավանան տիրապետելու փորձ անելը:

ՆԻԻ-ԵՐՈՒ, 23 ապրիլի: Սանտ-Եագոյի մէջ ամբողջ յարձակվեց բրիտանական հիւպատոսի վրա: Հիւպատոսը, պաշտպանվելով, սպանեց մի սպանիացու, որի պատճառով ձերբակալվեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի: «Правит. Вѣстникъ» լրագրում հրատարակված է հետեւեալ կառավարչական հաղորդագրութիւնը. Վերջին ժամանակները սկսեցին մամուլի մէջ թղթակցութիւններ երեւալ անցեալ տարի ամերիկացիներին վնասված նահանգներից, որոնց մէջ այդ նահանգները ազգաբնակչութեան դրութիւնը նկարագրվում է չափազանց տխուր և թշուառ, ուր չը կայ կադմակերպված օգնութիւն: Վերջինեալ թղթակցութիւնների մէջ պարունակած տեղեկութիւնները մեծ մասամբ չարագանջում են թշուառութեան չափը և ամենին չեն համապատասխանում իրականութեան: Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, դէպքեր չեն եղել, որ մերժած լինելին միջերեքնու օգնելու կարօտ ազգաբնակչութեանը, ոչ էլ սովի, տիֆի և այլ հիւանդութիւնների դարգացման դէպքեր են եղել անբերելիութիւնից զրկված տեղերում, կերակրի պակասութեան պատճառով: Մամուլի հրատարակած այն փաստերը, որոնք կարող էին

ստուգվել, մասամբ չը հաստատվեցին ամենին, մասամբ չեն դուրս գալիս աղբատութեան և կարելի է սովորական երեւոյթների շարքից, որոնց կարելի է հանդիպել թէ գիւղական և թէ ազգաբնակչութեան կեանքի ուրիշ պայմաններում: Ապա բերված է ազգաբնակչութիւնը սովից ապահովելու համար ձեռնարկած միջոցների ցուցակը 1897—1898 թւերին, նոյնպէս և պաշտօնական տեղեկութիւնների գումարը ներկայ դրութեան մասին: Բանից դուրս է գալիս, որ ոչ թէ սով է, այլ անբերելիութիւն հետեւեալ նահանգներում՝ Կուրսկի, Օրլովի, Բեալանի, Սամարայի, Սարատովի, Ստավրոպոլի, Տամբովի, Տուլայի, Ուֆայի, Նիժնեգորոյի, Օրենբուրգի, Պէրմի, Ուֆայի, և Կոնի չրվանի, որոնց տրված է թէ հացով և թէ փողով մինչև ութ և կէս միլիոն ռուբլի: Մի և նոյն ժամանակ համեմատում է 1891 սովի տարվայ կարիքը 1897 թվի անբերելի տարվայ հետ և փաստորէն ապացուցանում է, որ այս անբերելիութիւնը ոչինչ նմանութիւն չունի սովի տարվայ հետ: Ապա ասվում է. «Այդպիսով, անցեալ տարվայ անբերելիութիւնը ամենին չէ կարող համեմատվել 1891 թվի թշուառութիւնների հետ և, կարօտեալների դրութիւնը թեթեւացնելու համար ձեռք առած միջոցների չնորհիւ, ինչպէս պարզվեց այժմ, ազգաբնակչութիւնը առանձին զօրութեան լինելու չէ զգալ թէ կերակրվելու և թէ դարմանացան անելու այս տարվայ դարմանը: Բայց մի և նոյն ժամանակ մնում է ընդարձակ ասպարէզ մասնաւոր բարեգործութեան գործունէութեան և անբերելիութեան դէմ կռուելու համար վերջինեալ տեղերում: Ի նկատի ունենալով այդ, ներքին գործերի մինիստրութիւնը կատարեալ համակցութեամբ վերաբերվեց ռուսաց Կարմիր Խաչի ընկերութեան զլխաւոր վարչութեան առաջարկութեանը՝ օգնութիւն հասցնել անցեալ տարվայ անբերելիութիւնից վնասված ազգաբնակչութեանը կայսրութեան զանազան տեղերում: Նոյնպէս և ամեն տեղում մասնաւոր նուիրատուութիւններ, թեթեւացնելով ամենից շատ կարիք ունեցող գիւղական ազգաբնակչութեան պատկանող անձերի և առանձին ընտանիքների դրութիւնը, առանց ծանրաբեռնելու նրանց պարտքերով, չեն կարող շատ ցանկալի չը լինել:

ՄՍՍՎՍ, 22 ապրիլի: Նախկին ճանապարհ ընկաւ Վիէննա: Բաղմաթիւ հասարակութիւն ճանապարհ գցեց նրան ծախսարկութիւններով:

ՊԱՐԻՋ, 22 ապրիլի: Բարձր երկրագործական խորհուրդը կարծիք յայտնեց, թէ անհրաժեշտ է վերացնել մինչև յուլիս 1-ը հացի մաքանարկը: Կառավարութիւնը անյապաղ կը կայացնի համապատասխան որոշում:

Կ. ՊՈԼԻՍ, 22 ապրիլի: Յունական պատերազմական տուգանքի վճարման հրատարակութիւնը և Թեսալիայից թուրքաց զօրքերը հեռացնելու Թուրքիային արած առաջարկութեան ուշանում է այն պատճառով, որ Անգլիան, որպէս երաշխաւոր պետութիւններից մէկը, առաջարկեց, որպէս զի պատերազմական տուգանքի վճարումը տեղի ունենայ Թեսալիայից թուրքաց զօրքերը հեռացնելուց յետոյ միայն: Այդ առաջարկվելու կարճ ժամանակում պետութիւնների առաջարկ է դարձել պետութիւնների մէջ: Յոյս ունեն, որ համաձայնութիւն կը կայանայ մի քանի օրից յետոյ:

ՀՌՈՄ, 23 ապրիլի: Հացի թանկութեան պատճառով տեղի ունեցան մեծ անկարգութիւններ. մի քանի տեղ գործը հալածա արհեստեղ ընդհարման: Ձեռք են առնված զինուորական միջոցներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի: Կարսի նահանգապետ Տօմիշ Նշանակվում է ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ:

Ներքին գործերի մինիստրը որոշեց. — յայտնել «Русскія Вѣдомости» լրագրին երրորդ նախադրույթիւն և դադարեցնել նրա հրատարակութիւնը երկու ամսով:

Իմբադր՝ Ա.Լ.ԲԱՍՆԻՐ ԲԱՍՆԻՐ
Հրատարակիչ՝ Ա.Ն.ԻՐԵՍՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ խնդրում է անդամներին շնորհ բերել ընկերութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ Ժողովին, որ նշանակված է ապրիլի 26-ին, առաւօտեան ժամը 11-ին, Կար ու ձեռք գալուց (Գանձակայա, № 25):

- Ժողովի պարագմունքներն են.
- 1) Անցեալ ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը.
 - 2) Անցեալ տարվայ ելեմտից հաշուի ընթերցումն ու հաստատելը.
 - 3) 1898 թ. համար կազմած նախահաշուի ընթերցումն ու հաստատելը.
 - 4) Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցումը.
 - 5) Վարչութիւնից հերթով դուրս գնացող 4 անդամի և 5 փոխանդամի ընտրութիւնը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԳՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուլիա, Վորոնոյի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բայի կերակրի օրերից:

Ա. Ռ. Ա. Ռ. ՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վնասական (սիֆիլիս) և միզապատ. հ. Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին

Նեարդային հ. ԿԻՆԻՔԻՆԻԱ Ս. Ի. ՐՈՒԳԵՆԿՈ—10½—11½ ժ. կանանց և երեխայից հ., ծաղիկ պատաս-
տում:

Ձ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11½—12 ժ. կան-
անց հիւանդ. Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԻ—12—1 ժ. ակնային կորուկ, ըթի և կրծքի հ. Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին երեխայից հ.

Ա. Գ. ԳՈՒԲԿՈ—1½—2½ ժ. ներքին, և գլխաւորական հ. Ն. Ս. ՄԱՐԿԻԼՍԿԻ—5—6 ժ. ներքին և երե-
խայից հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6½—7 ժ. Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (և ընկարաբուժութիւն), վնասական և մորթի հ. Տ. Ի. ՐՈՒԳԵՆԿՈ հիւանդանոցում քիմիական և խնդրացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէկի, իւրի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդ (Կոմիտէ) և օպերացիայի համար առանձին Հիւանդանոցի վերադասում ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ
107—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԵՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, ապրիլի 24-ին, Մօսկվայի Կօրշի-
թատրօնի ռուսաց դրամատիկական խմբի արտիստները, Ֆ. Ա. Կօրշի անձնական ղեկավարութեամբ, կը ներկայացնեն
Գերմանուհի Ս. Ն. ԱՋԱԿԱՐՈՎԱՅԻ ընկերակցին

ՅՏՕՐԱԿՔԵՆԱ
Դրամա 4 գործ. Պանդրօ:
Առաջին անգամ՝ նոր պիեսա:

ՕՏԼԻԿԻՆՍԿՈՅԵ ՍԵՐԴԵՇԿՈ
Դրամա Կօրնէկովի:

Մասնակցում են տ. տ. Մուրիլ-Բորոգինա, Կլարա Պաւլովա, Միքայիլա, Զօրինա, պ. Տու-
րէյից, Կոստանտինով, Տուգանով, Եսովիլի, Զարուկի, Մօսկվայի, Կօրսով և ուրիշները:
ԱՆՕՆՍ. Վաշը, «Торъ отъ ума», 4 գործողու-
թեամբ, Կրիստօֆովի:

Կերակրի, երկու ներկայացում, առաւօտեան պակասեցած գինով 1. «Въ чужомъ пирѣ пох-
мѣль» հեղ. Օտարովսկի, 2 «Мнимый больной» հեղ. 4 գործ. Մօլիերի: Ներկայեան «Коварство и любовь» 5 գործ. և 9 պատկերներով:

1—1

ԲԱՐԱՇԵՆ ՏՈՒՆ

400 քառ. սաճիկ հողով վաճառվում է ԱԼԵԿ-
ՍԱՆԴՐՈՎՈՒՈՒՄ, Բէշուկեան փողոցում: Գինը
կարելի է լամանայ Արտաշէս Տալանցից և Տիգ-
րան Մարուքեանցից:

1—5

ԲՕՐԺՕՄԻՍԷՋ

վարձով է տրվում երեք ամսանոց Միքայիլեան
— Նաբերեժնայա փողոցի վրա, 9, 5 և 3 սենեակ-
ներ խոնարհներով, կա՛ն կարասիքով, դաշնա-
մուրով և ջրով: Պայմանների համար դիմել Ս.
Մանիլայեանի գրասենեակը, Միշին փողոցում:
(Ո. Ե. Տ. 2.)

1—6

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

ՋՈՆ ՄՏԻՆԻՐՏ ԲԻԼԼԻ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գրքի հայերէն թարգմանութիւնը՝ հեղինակի
համառօտ կենսագրութիւնով: Գինը 1 ռուբլի 30
կօպէկ, ճանապարհածախով:

Մամուլի տակ է Ս. Տէր-Աւետիքեանի
«ԻՐԱՆԳԻՍՏԻ ԴԱՏԱ». գինը 80 կօպէկ, ճանա-
պարհածախով:

Գինը՝ Москва, Сухаревская площадь, №
306, А. Д. Саргсяну.

5—5

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

խնդրում է անդամներին շնորհ բերել ընկերութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ Ժողովին, որ նշանակված է ապրիլի 26-ին, առաւօտեան ժամը 11-ին, Կար ու ձեռք գալուց (Գանձակայա, № 25):

Ժողովի պարագմունքներն են.